

Փետրուար 10, 1976

Արժանաշնորհ  
Տ. Լեւոն Քհնյ. Առաքելեան  
Հովիւ Ս. Համբարձումն Սկեղեցւոյ  
Պրիմֆորթ.

Արժանաշնորհ Տէր Հայր,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Փետր. 2, 1976 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Յունուար 25ին գումարուած ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը:

Որպէս զի Առաջնորդ Սրբազան Հայրը վաւերացնէ ծխական Խորհուրդի ընտրութիւնը՝ անհրաժեշտ է որ փութով Առաջնորդարան ղրկէք հետեւեալ նիւթերը.

- ծխական ժողովին ներկայացուած տեղեկագիրները
- ծխական ժողովին ներկայացուած ելեւմտական հաշուեկշիռը
- Անդամներուն ղրկուած հրաւիրագիրէն եւ օրակարգէն օրինակ մը
- Ներփակեալ զոյգ հարցարանները
- ծխական ժողովի ասենագրութիւնը

Համեցէք կարեւորութեամբ ընթացք տալ Նորին Սրբազնութեան սոյն յանձնարարութեան:

Խորին յարգանքով՝

Նուպար Քիւփէլեան  
Քարաուղար